Հավելված N 1
ՀՀ կառավարության 2011 թ.
հունիսի 17-ի նիստի N 23
արձանագրային որոշման

Ռ Ա Ձ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) ու միջին մասնագիտական (այսուհետև՝ ՆՄՄԿ) ուսումնական հաստատությունների գերատեսչական ենթակայության փոփոխության միջնաժամկետ ռազմավարության ծրագիրը մշակվել է Մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտի հայաստանյան և միջազգային փորձագետների երաշխավորությունների հիման վրա, որոնք արդյունք են արդեն շուրջ 5 տարի շարունակվող քննարկումների:

Ռազմավարական ծրագիրը ներառում է ուսումնական հաստատությունների գերատեսչական ենթակայության վերանայման անհրաժեշտության, գործընթացի իրականացման հետ կապված գործառույթների և մեխանիզմների հարցերը: Ենթադրվում է, որ հաստատությունների գերատեսչական ենթակայության վերանայումը և դրանք մեկ գերատեսչական ենթակայության՝ այս դեպքում ՀՀ կրթության և գիտության նախարարությանը հանձնելը կնպաստի մասնագիտական կրթության ոլորտում սոցիալական գործընկերային վարույթի ամբողջական ներդրմանը, պատվիրատու - սոցիալական ենթակառուցվածքներ - իրականացնող շղթայի արդյունավետ փոխկապակցմանը:

Մասնավորապես 2005 թվականին Եվրոպական հանձնաժողովի պատվիրակության հրավերով Հայաստան ժամանած ՄԿՈՒ ոլորտի միջազգային փորձագետ Յանիս Սոֆիանոպուլոսը նախապատրաստել էր «Հայաստանում ՄԿՈՒ ոլորտի գնահատման զեկույցը», որում նշվում է, որ ՄԿՈՒ համակարգում կարևորագույն հիմնախնդիրներից է ուսումնական հաստատությունների ենթակայության հարցը:

Կրթության ոլորտում աջակցության ծրագրեր իրականացնող կազմակերպությունները (միջազգային, հասարակական, բարեգործական և այլն) նույնպես նախապատվությունը տալիս են ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ համագործակցությանը՝ որպես համակարգի պատասխանատուի:

Խնդրի շուրջ քննարկումներից ակնհայտ է այն, որ պատվեր ձևավորողը, կադրեր պատրաստողը և կրթության որակի ապահովումը վերահսկող պատասխանատուն չպետք է լինի նույն պետական մարմինը: Կրթական քաղաքականությունը պետք է հստակորեն սահմանի պատասխանատվությունների և իրավասությունների բաշխումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև կառավարության ու սոցիալական գործընկերների միջև:

Ռազմավարական ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել երկրի ընդհանուր կրթական քաղաքականությանը, սոցիալ-տնտեսական զարգացման ազգային ծրագրին ու գերակայություններին համապատասխանեցնելու վերաբերյալ պահանջը:

Իրավիճակի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության մասնագիտական կրթության համակարգը ձևավորվել է դեռևս 20-րդ դարի սկզբներին և իր գոյության ու գործունեության ընթացքում պատրաստել է հարյուր հազարավոր մասնագետներ, որոնք անգնահատելի դեր են կատարել Հայաստանի տնտեսության ստեղծման ու զարգացման գործում: Սակայն 80-ական թվականներից նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական համակարգը հետընթաց ապրեց, իսկ 90-ականներին համակարգի դերակատարումը տնտեսության մեջ բոլորովին անտեսվեց:

Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ներկա փուլում էական նշանակություն ունի նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական որակյալ կրթությունն ու ուսուցումը: Նրա ապահովումն ու մատչելիությունը հանրապետության տնտեսական աճի, աղքատության ու անհավասարության նվազեցման կարևորագույն գործոններից մեկն է:

Վերջին տասնամյակի ընթացքում ՀՀ կառավարության, ՀՀ կրթության և գիտության նախարարության և շահագրգիռ մարմինների կողմից քայլեր են ձեռնարկվել շտկելու իրավիճակը և իրականացվել են մի շարք բարեփոխումներ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական համակարգի բարեփոխումների իրականացման էական քայլն հանդիսացավ <<Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական

կրթության մասին>> ՀՀ օրենքի ընդունումն Ազգային ժողովի կողմից 2005 թվականին: Նշված օրենքը կարգավորում է ՆՄՄԿ համակարգում Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության սկզբունքները, կազմակերպա-իրավական և ֆինանսատնտեսական հիմքերը, իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքներն ու պարտականությունները:

2011 թվականի ապրիլի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների թիվը կազմել է 105, որից 77-ը միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ են, իսկ 28-ը՝ արհեստագործական ուսումնարաններ: Միջին մասնագիտական ուսումնական հաստատություններն ըստ գերատեսչական ենթակայության գտնվում են 6 նախարարությունների և 1 վարչության ենթակայության տակ: 28 արհեստագործական ուսումնարաններից 15-ը գտնվում են 1 նախարարության, իսկ 13-ը՝ մարզպետարանների և Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ: Ըստ գերատեսչական ենթակայության ուսումնական հաստատությունների բաշխվածության առավել հստակ պատկերը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

ՀՀ նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունների

բաշխվածությունը ըստ գերատեսչական ենթակայության

N	Նախարարության, գերատեսչության անվանումը	Հաստատությունների թիվը		
		Ընդամենը	որից	
			միջին մասնագիտական	նախնական մասնագիտական
1.	ՀՀ կրթության և գիտության նախարարություն	66	51	15
2.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	9	9	-
3.	ՀՀ առողջապահության նախարարություն	11	11	-
4.	ՀՀ մշակույթի նախարարություն	2	2	-
5.	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2	2	-
6.	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	1	1	-
7.	ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն	1	1	-
8.	Երևանի քաղաքապետարան	5	-	5
9.	ՀՀ Արմավիրի մարզպետարան	1	-	1
10.	ՀՀ Շիրակի մարզպետարան	1	-	1
11.	ՀՀ Արագածոտնի մարզպետարան	1	-	1
12.	ՀՀ Կոտայքի մարզպետարան	2	-	2
13.	ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան	1	-	1
14.	ՀՀ Տավուշի մարզպետարան	1	-	1
15.	ՀՀ Լոռու մարզպետարան	1	-	1
	Ընդամենը	105	77	28

2. Հիմնախնդիրները

Ներկայացված տվյալների դիտարկումը ցույց է տալիս, որ 105 մասնագիտական ուսումնական հաստատությունները գտնվում են 15 տարբեր ենթակայությունների ներքո, ընդ որում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունները տարբեր նախարարությունների ենթակայությամբ, իսկ նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատությունները՝ մարզպետարանների և քաղաքապետարանի: Միայն ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ են գործում և' նախնական մասնագիտական (արհեստագործական), և' միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: Թվում է, որ որևէ խնդիր այստեղ չի կարող առաջանալ, որովհետև բոլոր նախարարությունները և մարզպետարանները պետական կառույցներ են և իրենց մոտեցումների մեջ պետք է ղեկավարվեն կրթության ոլորտում պետական ռազմավարությունից բխող և ՀՀ օրենսդրությամբ ամրագրված նույն իրավական ակտերով և տրամաբանությամբ: Դա իրոք այդպես է, եթե խոսվում է ընդհանուր մոտեցումների մասին: Սակայն հարցի հետ կապված մանրամասները ավելի հանգամանալից դիտարկելու պարագայում ի հայտ են գալիս հետևյալ հիմնախնդիրները.

1. Ոլորտային գերատեսչությունների ենթակայությամբ գործող ուսումնական հաստա-տություններում պատվիրատու (գործատու) - սոցիալական ենթակառուցվածքներ - կրթության կազմակերպում ուղիղ և հակադարձ շղթայում տեղի են ունենում շահերի բախում:
2. Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության որակավորումները և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունները որակավորումների ազգային շրջանակի սանդղակում (նախագիծը շրջանառվում է) գտնվում են հարակից, իսկ որոշ դեպքերում էլ նույն մակարդակում: Սա նշանակում է, որ այդ մակարդակների կրթական ծրագրերի իրականացման ժամանակ ուսումնական հաստատությունները իրենց աշխատանքի ընթացքում շատ սերտ համագործակցության մեջ պետք է լինեն: Տարբեր գերատեսչական ենթակայությամբ գործելու պարագայում համագործակցության և աշխատանքների փոխհամաձայնեցման բնագավառում առաջանում են տարբեր խնդիրներ, որոնց հաղթահարումը լրացուցիչ ժամանակ է պահանջում, նվազում է հարցերի լուծման արդյունավետությունը: Նույնը նկատելի է նաև տարբեր ենթակայություն ունեցող միջին մասնագիտական ուսումնական

հաստատությունների պարագայում, չնայած դրանք նույն մակարդակի կրթական ծրագրեր են իրականացնում:

3. Բոլոր պետական մասնագիտական ուսումնական հաստատությունները ֆինանսավորվում են պետական բյուջեից, ընդ որում տարբեր ենթակայությունների պարագայում պետական բյուջեից հատկացումը նրանց տրամադրվում է տարբեր ճանապարհներով: Այստեղ, թվում է, թե որևէ խնդիր չկա: Սակայն եթե բյուջետային հատկացումը դիտարկվում է որպես մասնագիտական կրթության կարիքների համար պետական բյուջեի նույն հոդվածով կատարվող միասնական ծախս, պարզվում է, որ տարբեր ենթակայությունների գոյության դեպքում բյուջետային ծախսի տվյալ հոդվածի ամբողջությունը բաժանվում է մասերի: Սովորաբար դա հանգեցնում է հատկացված միջոցների փոշիացման և ոչ ռացիոնալ օգտագործման: Մասնավորապես, նույն նախարարությունը կարող է ըստ ստեղծված փաստացի վիճակի ուսումնական հաստատությունների միջև միջոցների որոշակի չափով վերաբաշխում կատարել: Տարբեր ենթակայությունների դեպքում դա հնարավոր չէ: Ստացվում է, որ 105 ուսումնական հաստատություններից 39-ը ֆինանսական միջոցները ռացիոնալ օգտագործմանն ուղղված այս կարևոր գործընթացից դուրս են մնում: Արդյունքում, կարող է մի նախարարությունում մասնագիտական կրթության համար պետական բյուջեից ստացված ֆինանսավորման մի մասը չօգտագործվել, իսկ մյուսում՝ պահանջ առաջանա:

4. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ ունեցող նախարարությունները և մյուս կազմակերպությունները ունեն համապատասխան ստորաբաժանումներ կամ առանձին մասնագետներ, ովքեր կանոնակարգում և համակարգում են հաստատությունների գործունեությունը: Հանրապետության մասշտաբով այդ աշխատողների թիվը զգալի չափով գերազանցում է իրականում պահանջվող աշխատողների թվին: Դա նշանակում է, որ հաստատությունների տարբեր գերատեսչական ենթակայության գոյության պարագայում կառավարման համակարգում աշխատողների թիվը արհեստականորեն ուռճացված է, ինչը լրացուցիչ բյուջետային ծախսեր է պահանջում:

5. Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության բնագավառի աշխատանքերի բարելավմանն ուղղված միջոցառումներն ընդլայնվում են և ներառում բոլոր ուսումնական

հաստատությունները: Այդ նպատակով մշակվում են կարողություններին միտված պետական կրթական չափորոշիչներ, կազմվում ուսումնական պլաններ և մոդուլային ուսումնական ծրագրեր: Դրանք արդեն իսկ ներդրված են ուսումնական հաստատություններում: Բարելավման նպատակով իրականացվող աշխատանքների շարքում առանձնահատուկ տեղ է հատկացվում ուսումնական հաստատությունների աշխատակիցների նպատակային վերապատրաստումներին, ներդրվում են կառավարման նոր մոդելներ, ուսումնական հաստատությունները պետք է մշակեն իրենց աշխատանքային տարեկան բիզնես պլաններ, միջնաժամկետ զարգացման ծրագրեր: Տարբեր ենթակայությունների պարագայում այս աշխատանքների ընթացքը որոշակի չափով դանդաղում է, հաճախ էլ կարող են հակասական իրավիճակներ առաջանալ:

Նշված հիմնախնդիրների առկայությունը պահանջում է համապատասխան լուծումներ, որի համար առաջին հերթին անհրաժեշտ է նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները բերել մեկ ենթակայության՝ որպես կրթության կառավարման պետական լիազորված մարմնի, ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայության:

3. ՆՄՄԿ ուսումնական հաստատությունների գերատեսչական ենթակայության փոփոխության միջնաժամկետ ռազմավարության ծրագրի իրականացումը

Հաշվի առնելով, որ ուսումնական հաստատությունների ենթակայության փոփոխման գործընթացը ներառում է մի խումբ ենթագործընթացներ (ենթաօրենսդրական ակտերի փոփոխություն, բյուջետային ֆինանսավորման վերանայում, ուսումնական հաստատությունների հանձնում-ընդունում և այլն), այն կիրականացվի 2011-2013 թվականների ընթացքում՝ 3 փուլերով.

1. առաջին փուլով՝ 2011 թվականի ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանը կհանձնվեն 13 արհեստագործական ուսումնարաններ,
2. երկրորդ փուլով՝ 2012 թվականի ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանը կհանձնվեն 11 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ (ՀՀ գյուղատնտեսության նախարարության, ՀՀ

մշակույթի նախարարության և ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության ենթակայությամբ գործող): 2011 թվականի ընթացքում այս ուսումնական հաստատություններում կճշգրտվեն և ավարտուն վիճակի կբերվեն աշխատաշուկայի պահանջներին համապատասխան առավել պահանջարկված մասնագիտությունների ցանկը և կիրականացվեն ենթակայության փոփոխման հետ կապված նախապատրաստական աշխատանքները:

3. Երրորդ փուլով՝ 2013 թվականի ընթացքում ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությանը կհանձնվեն ՀՀ առողջապահության նախարարության ենթակայությամբ գործող 11 միջին մասնագիտական ուսումնական հաստատություններ: 2011-2012 թվականների ընթացքում այս ուսումնական հաստատություններում կճշգրտվեն և ավարտուն վիճակի կբերվեն առողջապահության ոլորտում առավել պահանջարկված մասնագիտությունների ցանկը և կիրականացվեն ենթակայության փոփոխման հետ կապված նախապատրաստական աշխատանքները: